

ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2017 ՀԱՅԱՍՏԱՆ

*Հրապարակվել է ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության,
մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից*

29 մայիսի, 2018թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Սահմանադրությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին (ՀԱԵ) որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող, բայց նաև սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Փոքրամասնական կրոնական խմբերը հայտնում էին, որ հատկապես մտահոգված են այն հնարավոր բացասական ազդեցությամբ, որը կարող է ունենալ կրոնական փոքրամասնությունների վրա կրոնական ազատության մասին նոր օրինագիծը: Քրիստոնեական փոքրամասնական կրոնական խմբերի ներկայացուցիչները փաստում էին, որ շարունակել են ազատ իրականացնել իրենց կրոնական արարողությունները, որոշ քրիստոնյաներ, այնուհանդերձ, նշել են, որ պարտավորված են զգացել իրենց հավատքին դավանել աննկատ՝ հատկապես զինված ուժերում ծառայելու ժամանակահատվածում: Իրավապաշտպան ակտիվիստները շարունակում էին մտահոգություն հայտնել դպրոցներում ազգային ինքնությունը հաճախ ՀԱԵ-ին հարելու հետ նույնացնելու մասին ՀԱԵ-ի ուսմունքի տարածման հարցում պետության թողտվության վերաբերյալ: Ըստ փոքրամասնական կրոնական խմբերի և հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների)՝ պետական մակարդակով արվող հայտարարությունները, որով ազգային ինքնությունը նույնացվում է ՀԱԵ-ին հարելու հետ, շարունակել է լիցք հաղորդել ՀԱԵ-ից զատ մյուս կրոնական կազմակերպությունների նկատմամբ թե՛ պետական, թե՛ հասարակական խտրականությանը:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ Եհովայի վկաները հայտնում էին, որ տարվա ընթացքում իրենց հետևորդների հանդեպ հասարակության անդամների կողմից ֆիզիկական ոտնձգություններ չեն եղել. եղել են խոսքով վիրավորանք հասցնելու 10 դեպք, մինչդեռ նախորդ տարում գրանցվել էր նման 17 դեպք: Այս նվազումը Եհովայի վկաները վերագրում են ոստիկանության կողմից ձեռնարկվող օպերատիվ քայլերին: «Փյուն» հետազոտական կենտրոնի ուսումնասիրության համաձայն, որը

հրապարակվեց մայիսին, հարցվածների 82 տոկոսը համաձայնել էր այն պնդմանը, որ «Երկրի ազգային ինքնությունն իրապես կիսելու համար կարևոր է լինել ՀԱԵ-ի մաս»: Ըստ քրիստոնեական փոքրամասնական խմբերի և ՀԿ-ների՝ շարունակվել է լրատվական դաշտի բարելավումը կապված փոքրամասնական կրոնական խմբերի հետ՝ նախորդ տարիների համեմատ ապահովելով առավել հավասարակշռված ու ճշգրիտ լրատվություն. Եհովայի վկաներն, այնուհանդերձ, մատնանշում էին լրատվամիջոցներում տեղ գտած բացասական հրապարակումներ:

ԱՄՆ դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաները շարունակել են խթանել կրոնական հանդուրժողականությունն ու միջդավանական երկխոսությունը պետական պաշտոնյաների հետ իրենց հանդիպումներում: Դեսպանության պաշտոնյաները հանդիպել են ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ ներգրավելու ՀԱԵ-ին կրոնական փոքրամասնությունների կողմից առանց սահմանափակումների իրենց հավատքին դավանելու իրավունքների պաշտպանության հարցերում: Դեսպանությունն օգտագործում է Ֆեյսբուքյան և թվիթերյան հարթակները՝ կրոնական հանդուրժողականությանն աջակցող ուղերձներ տարածելու համար: Դեսպանը և դեսպանության պաշտոնյաները պարբերաբար հանդիպել են փոքրամասնական կրոնական խմբերի հետ՝ քննարկելու կրոնական ազատության իրավիճակը երկրում:

ՄԱՍ I. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր բնակչությունը կազմում է շուրջ 3.1 միլիոն (2017թ. հուլիսի դրությամբ): Ըստ 2011թ. մարդահամարի բնակչության 92 տոկոսն իրենց բնորոշում են որպես ՀԱԵ-ին հարող: Մյուս կրոնական խմբերը, որոնցից որևէ մեկը չի գերազանցում բնակչության 1 տոկոսից ավելը, ներառում են. Հռոմեական կաթոլիկներ, Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, ավետարանական քրիստոնյաներ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու հետևորդներ (մորմոններ), Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցու հետևորդներ, հեթանոսներ, քրիստոնյա-մոլոկաններ, եզդիներ, հրեաներ, բահայիներ, սունի և շիա մահմեդականներ: Հրեական համայնքի տվյալներով հրեաների թիվը 500-ից 1000 հոգու սահմաններում է:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Հրեաների մեծ մասը, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը, որն հիմնականում կազմված է շիա մահմեդականներից և ներառում է իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

ՄԱՍ II. ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Իրավական դաշտ

Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի ծիսակատարություններով՝ օրինակ՝ քարոզ կամ եկեղեցական արարողություններ, արտահայտելու ազատությունը: Սահմանադրությունը թույլ է տալիս սահմանափակել այս իրավունքը պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությունը սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Այն ճանաչում է «Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը կրոնական ատելություն բորբոքելու նպատակով: Այն թույլ է տալիս, որ այն անձինք, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, անցնեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում «հոգեորսությունը», եզրույթ, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը. այնուհանդերձ, այս օրենքով քրեական հետապնդումներ չեն արձանագրվել:

Օրենքի համաձայն գրանցված կրոնական խմբերն իրավունք ունեն ասպահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը. կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր, օգտվել զանգվածային լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Օրենքը կրոնական խմբերի գրանցման պահանջ չի սահմանում, սակայն վերջիններս իրենց անունով գործարքներ կատարելու համար (օրինակ՝ սեփականություն ունենալ, վարձակալել գույք կամ բանկային հաշիվներ բացել) պետք է գրանցված լինեն: Օրենքը չի սահմանում չգրանցված խմբերի իրավունքները:

Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը պետք է Պետոեզիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնից առ այն, որ համայնքը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» վրա, «զերծ է նյութապաշտությունից և ուղղված է հոգևոր ոլորտները» և ունի առնվազն 200 չափահաս անդամ և իր ուսմունքով մտնում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են համարվում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Օրենքը սահմանում է, որ այս գրանցման պահանջների ցանկը, որի մասով համապատասխանությունը հաստատվում է Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնի կողմից, չեն վերաբերվում այն կրոնական կազմակերպություններին, որոնք հիմնված են ազգային փոքրամասնություն ճանաչված որևէ խմբի կրոնի վրա: Պետոեզիստրի որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել:

Քրեական օրենսգրքով արգելվում է «կրոնի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը», որի համար սահմանվում է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով (410 ԱՄՆ դոլար) կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը լիազորված է զբաղվել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման պաշտոնյաների կողմից թույլ տրված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այդ թվում կրոնական ազատության խախտումներով:

Օրենքն արգելում է ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական համակարգի կամ փրկարարական ծառայության աշխատակիցներին լինել կրոնական կազմակերպության անդամ, սակայն օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում «անդամակցությունը» կրոնական կազմակերպությանը: Օրենքն արգելում է ոստիկանության, զինված ուժերի և Ազգային անվտանգության ծառայողներին, ինչպես նաև դատախազության աշխատակիցներին, դիվանագետներին և պետական, համայնքային ու քաղաքացիական ծառայողներին օգտագործել իրենց ծառայողական դիրքը «կրոնական միավորումների» շահերի համար կամ նրանց օգտին քարոզչության համար: Օրենքով նաև արգելվում է ոստիկանների, դատախազների, այլ պետական ու քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս այլ կրոնական գործունեություն իրականացնելը: Թեպետ օրենքը սահմանում է «կրոնական կազմակերպությունը» որպես հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջումների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում, սակայն «կրոնական միավորման» սահմանում չի տրվում: Զինվորական ծառայության մասին նոր օրենքով,

որն ընդունվել է նոյեմբերի 15-ին, զինձառայողն իրավունք չունի ստեղծել կրոնական միավորումներ: Իսկ եթե զինձառայողը հանդիսանում է կրոնական միավորման անդամ, ապա իրավունք չունի զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Օրենքը ՀԱԵ-ին հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, և ազատագրկման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն տվյալ հաստատության ղեկավարից թույլտվություն ստանալու դեպքում: Օրենքը նաև նախատեսում է, որ պետությունը չի միջամտի ՀԱԵ-ի՝ ողջ երկրի տարածքում ազատորեն քարոզչություն իրականացնելու և իր հավատը տարածելու բացառիկ իրավունքի իրացմանը:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, և նշվում է, որ «կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ներառված է հանրային և մասնավոր դպրոցների ազգային կրթակարգի պարտադիր ուսուցման առարկայացանկում և դասավանդվում է 5-11 դասարաններում:

ՀԱԵ-ն իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրերի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Եկեղեցին կարող է առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել, սակայն նրանք հանդիսանում են պետական աշխատողներ: Բոլոր աշակերտները պարտավոր են մասնակցել այս դասերին. առարկայից հրաժարվելու հնարավորություն սահմանված չէ: Օրենքը ՀԱԵ-ին իրավունք է շնորհում կազմակերպել կրոնական ուսուցման կամավոր արտածրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամների համար կրոնական ուսուցում իրականացնել իրենց պատկանող հաստատություններում, սակայն ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքում:

Աշխատանքային օրենսդրությամբ գործատուներին արգելվում է աշխատակիցների կրոնական հայացքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, օրենքը սահմանում է պարտադիր երկամյա զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը շարունակում է համարվել քրեորեն պատժելի արարք, որի համար նախատեսված պատժամիջոցները պայմանավորված

գործի հանգամանքներից կարող են լինել 2 ամսվա կալանքից մինչև 8 տարվա ազատազրկում:

Օրենքի համաձայն կրոնական հիմքի վրա ձևավորված խմբերը չեն ճանաչվում որպես քաղաքական կուսակցություն:

Քրեական օրենսգրքով արգելվում է կրոնական աստելության հրահրումը բռնության, հրապարակային հայտարարությունների կամ լրատվության միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (410-1.000 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 2-ից 6 տարի ժամկետով:

Երկիրը Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություն է:

Կառավարության գործունեությունը

Ամփոփիչ պարբերություն. Կրոնական փոքրամասնական խմբերը նշում էին, որ մտահոգ են իրենց իրավունքների հնարավոր թուլացմամբ՝ կառավարության կողմից և նույնիսկ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի հանձնաժողով) փորձաքննության ուղարկված կրոնական ազատության մասին օրենսդրական նախաձեռնության արդյունքում: Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները փաստում էին, որ տվյալ օրենքը՝ ըստ նախագծի ընդունվելու դեպքում բացասաբար կանդրադառնա կրոնական փոքրամասնական խմբերի կրոնական ազատության վրա: Իրավապաշտպան ակտիվիստները շարունակում էին մտահոգություն հայտնել դպրոցներում ազգային ինքնությունը հաճախ ՀԱԵ-ին հարելու հետ նույնացնելու մասին ՀԱԵ-ի ուսմունքի տարածման հարցում պետության թողոտվության վերաբերյալ: Ըստ փոքրամասնական կրոնական խմբերի և ՀԿ-ների՝ որով ազգային ինքնությունը նույնացվում էր ՀԱԵ-ին հարելու հետ շարունակել է լիցք հաղորդել փոքրամասնական կրոնական խմբերի հանդեպ խտրականությանը: ՀԿ-ները և որոշ կրոնական խմբեր նաև նշում էին, որ դասագրքերում Աստվածաշնչի ու ՀԱԵ-ի հետ կապված ձևակերպումները, օրինակ՝ «մենք՝ հայերս քրիստոնյա ժողովուրդն ենք» կամ «ՀԱԵ-ի շնորհիվ քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնության անբաժանելի մասը», ցույց էին տալիս կառավարության նախապատվությունը ՀԱԵ-ի հանդեպ: Նրանք նաև փաստում էին, որ կրոնական մյուս խմբերը, երբեմն, բնութագրվում էին արհամարհական ու ոչ ստույգ ձևով: Տարվա ընթացքում կրոնական փոքրամասնական խմբերը, ի տարբերություն նախորդ տարիների, չեն ներկայացրել հաղորդումներ իրենց կրոնական համայնքի անդամների հանդեպ զինձառայության ընթացքում տեղ գտած ոտնձգությունների մասին: Խմբերից մեկի հաղորդմամբ բանակում, այդ թվում՝ և ՀԱԵ-ի սպասավորների կողմից, քրիստոնյա ավետարանականների նկատմամբ «դրական վերաբերմունք» էր դրսևորվում: Փոքրամասնական կրոնական խմբերի հաղորդմամբ նրանք ունեցել են պաշտամունքի ազատություն, եթե դա արել են մասնավոր և աննկատ կերպով՝

սահմանափակվելով միայն իրենց շինություններով ու համայնքով՝ փորձելով աչքի չընկնել ու իրականացնելով ինքնագրաքննություն:

Հունիսի 1-ին Արդարադատության նախարարությունը կրոնական ազատության մասով օրենսդրական փոփոխություններ կատարելու նպատակով առաջ քաշեց օրենսդրական փաթեթ, որը վերնագրված էր Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենք: Մինչ օրենքի նախագծի ներկայացումը նախարարությունը չէր անցկացրել խորհրդակցություններ կրոնական կազմակերպությունների կամ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի հետ: Բազմաթիվ կրոնական փոքրամասնական խմբերի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ նշում էին, որ առաջարկվող օրինագծում կային դրական զարգացումներ, մասնավորապես հանվում էին գրանցման ոչ հստակ պահանջները և չէր հիշատակվում «հոգեորությունը»: Սակայն, նրանք առանձնակի մտահոգություն էին հայտնում օրինագիծը ՀԱԵ-ի վրա չտարածելու կառավարության ակնհայտ մտադրության վերաբերյալ: Նրանք նաև մտահոգություն էին հայտնում, որ օրինագծի համաձայն կրոնական միավորումները չեն կարող ստանալ ֆինանսավորում արտերկրից, և չեն կարող ֆինանսավորել իրենց հոգևոր կենտրոններին կամ քաղաքական կուսակցություններին, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: Մտահոգիչ այլ հարցերից էին կառավարության կողմից կրոնական խմբերի վերահսկումը և օրինագծում ՀԿ-ներին հատուկ տեղ գտած ոչ հստակ դրույթները:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի պաշտոնական խնդրանքով քննության է առել առաջարկվող օրենսդրական փոփոխությունների փաթեթը: Սեպտեմբերի 29-ին ԺՀՄԻԳ-ի կողմից ներկայացված կարծիքում նշված էր, որ օրինագիծը մարդու իրավունքների միջազգային ստանդարտների հետ համապատասխանության մասով մեծ բարելավումներ է ապահովում, և այն նաև ներառում է կրոնական ու խղճի ազատության մասով Հայաստանի օրենսդրության վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախորդ համատեղ ներկայացված առաջարկների մի որոշակի մասը: ԺՀՄԻԳ-ը սակայն նշում էր, որ միջազգային ստանդարտների և ԵԱՀԿ-ի «մարդկային չափման» ներքո ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանության համար դեռևս լրամշակումների կարիք կա: ԺՀՄԻԳ-ի հիմնական առաջարկները ներառում էին. հստակ մատնանշում, որ սույն օրինագծի կարգավորումները տարածվում են ՀԱԵ-ի նկատմամբ. «պետական անվտանգություն» արտահայտության փոխարինում «հասարակական անվտանգություն» արտահայտությամբ, որպեսզի վերացվեն մտքի, խղճի և կրոնի կամ դավանանքի ազատության հնարավոր սահմանափակումները. կրոնական կազմակերպությունների կողմից անդամների հաշվառման պահանջի

վերացում. և կրոնական կազմակերպությունների արտաքին ֆինանսավորման արգելքի հանում:

Նոյեմբերի 30-ին ԺՀՄԻԳ-ի տված գնահատականից հետո Արդարադատության նախարարությունը կրոնական համայնքին ներկայացրեց օրենսդրական փաթեթի լրամշակված տարբերակը: Ըստ կրոնական ազատության հարցերով փորձագետների և կրոնական համայնքի բազմաթիվ ներկայացուցիչների՝ նոր տարբերակում թեպետ նշվում է, որ օրենքը տարածվում է ՀԱԵ-ի վրա, սակայն որոշ առումներով այս տարբերակն ավելի խնդրահարույց էր, քան նախորդ տարբերակը, քանզի այն հստակորեն միտված էր կրոնական կազմակերպությունների վերահսկմանը և կրոնի ազատության սահմանափակմանը: Ըստ «Կրոնի և իրավունքի կենտրոն» տեղական ՀԿ-ի նախնական գնահատման՝ օրինագծի վերանայված տարբերակում կային բազմաթիվ դրույթներ, որոնք նախկինում քննադատվել էին Վենետիկի հանձնաժողովի և ԺՀՄԻԳ-ի կողմից: Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրինագծի վերանայված տարբերակում մեկ տասնյակից ավել հիմքեր են մատնանշված (չատերը բավականին երկիմաստ ու տարաբնույթ մեկնաբանությունների համար բաց), որոնց առկայության դեպքում կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել, այդ թվում՝ եթե այդպիսի արտահայտումը վտանգել է պետական անվտանգությունը, թուլացրել է երկրի պաշտպանունակությունը, քարոզել է կրոնական մոլեռանդություն, ներառել է անօրինական կամ ոչ բարոյական գործողություններ, իրականացվել է շահադիտական նպատակներով կամ տեղի է ունեցել կրթական հաստատությունների մոտակայքում: Օրինագծով նաև արգելվում էր օտարերկրյա ֆինանսավորումը, ներառված էին հրապարակային պարտադիր հաշվետվությունների մասին դրույթներ և նախատեսվում էր կառավարության վերահսկողության մեծացում՝ հաշվետվական պահանջները չկատարելու դեպքում կազմակերպության գործունեության կասեցման հնարավորությամբ և բազմաթիվ այլ դրույթներ, որոնք քննադատների գնահատմամբ չափից դուրս և սահմանափակող էին: Ըստ Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչների նման դրույթները կարող են ընտրովի կերպով կիրառվել «ոչ ցանկալի» կրոնական փոքրամասնական խմբերին թիրախավորելու համար: Կառավարությունը նոյեմբերին նախագիծն ուղարկեց Վենետիկի հանձնաժողովին՝ փորձաքննության նպատակով:

Որոշ իրավապաշտպան ակտիվիստներ, կրոնական փոքրամասնություններ և արեխստներ շարունակում էին մտահոգություն հայտնել, որ կառավարությունը ՀԱԵ-ին ներառում է հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներում, և հատկապես հանրակրթական համակարգում, և թույլատրում է ՀԱԵ-ին դպրոցներում տարածել այնպիսի նյութեր, որոնց համաձայն ՀԱԵ-ին հարելը նույնացվում է ազգային ինքնության հետ:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները շարունակել են իրենց դժգոհությունը հայտնել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի պարտադիր լինելու վերաբերյալ, որը նրանք որակում են որպես «կրոնական դաստիարակություն»: 2016թ. դեկտեմբերին «Մինջար եզդիների ազգային միավորում» ՀԿ-ը բաց նամակով դիմեց վարչապետ Կարեն Կարապետյանին՝ մտահոգություն հնչեցնելով առ այն, որ պետությունը եզդի երեխաների կրոնական ազատության իրավունքը ոտնահարել է՝ իրականացնելով կրոնական դաստիարակություն և ոչ քրիստոնյա աշակերտների դավանափոխություն՝ դպրոցում որպես պարտադիր առարկա դասավանդելով Հայոց եկեղեցու պատմությունը: Կրթության և գիտության նախարարությունը սակայն նշում էր, որ իրենք Հայոց եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ որևէ բողոք չեն ստացել:

ՀԱԵ-ի հետ առնչություն չունեցող որոշ կրոնական խմբեր փաստում էին, որ որևէ առարկություն չունեն հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ: Օրինակ՝ «Կյանքի խոսք» եկեղեցու ներկայացուցիչներն ասում էին. «Հայկական եկեղեցու 1700-ամյա գործունեությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է, ուստի մենք դպրոցում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ առարկություն չունենք: Միաժամանակ, կարևոր է, որ չեզոք և հարգալից վերաբերմունք պահպանվի մյուս հարանվանությունների նկատմամբ և այլ կրոնական ուղղությունների հարող աշակերտների նկատմամբ չլինի քարոզչություն»: Սակայն մյուսները՝ ՀԿ-ներ, այլ կրոնական կազմակերպություններ, աթեիստներ, ՀԱԵ-ի ոչ հավատացյալ անդամներ, հրապարակավ մտահոգություն էին հայտնում: Եղել են հաղորդումներ, որ որոշ դպրոցներում առարկան դասավանդվել է ՀԱԵ-ի հոգևորականների կողմից և դասերի շրջանակում պահանջվել են այցելություններ ՀԱԵ եկեղեցիներ՝ առանց այլ հավատքներ քննարկելու կամ աշակերտների կողմից ՀԱԵ-ի կառույց չհանդիսացող կրոնական վայրեր այցելելու հնարավորությունների: Ըստ կառավարության 2016-17 ուսումնական տարում ՀԱԵ-ի հոգևորականների կողմից առարկան չի դասավանդվել, այլ միայն աշխարհիկ ուսուցիչների կողմից. լրատվամիջոցներում սակայն նշվում էր, ՀԱԵ-ի որոշ հոգևորականներ շարունակում են դասավանդել Հայոց եկեղեցու պատմություն: Ըստ հաղորդումների ՀԱԵ-ի կրոնական վայրեր այցեր կազմակերպել են նաև հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցիչները: Ըստ լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումների ՀԱԵ-ի հոգևորականներն այցելել են նաև պետական ֆինանսավորմամբ գործող մանկապարտեզներ, այդ թվում եկեղեցական տոների ընթացքում, ինչպես նաև եղել են մանկապարտեզի սաների այցելություններ եկեղեցի:

Հայոց եկեղեցու պատմություն առարկան քննադատողները նշում էին, որ դա «պատմության քողի տակ հրամցվող կրոնական դաստիարակություն է»: ՀԿ-ների և այլ կրոնական խմբերի կողմից մատնացույց էր արվում 5-րդ և 6-րդ դասարանի դասագրքերում կենտրոնացումը Աստվածաշնչի և ՀԱԵ-ի ավանդույթների վրա,

ինչպես նաև այնպիսի ձևակերպումները, ինչպիսիք են՝ «մենք՝ հայերս քրիստոնյա ժողովուրդ ենք» կամ «ՀԱԵ-ի շնորհիվ քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնության անբաժանելի մասը»: Նրանք նաև նշում էին, որ Հայոց եկեղեցու պատմության շրջանակում մյուս կրոնական խմբերը բնութագրվում էին արհամարհական ու ոչ ստույգ ձևով: Օրինակ՝ մահմեդականությունը նկարագրելիս դասագրքում գրված էր հետևյալը. «Ծանոթանալով Աստվածաշնչին, ինչպես նաև հրեական և քրիստոնեական կրոններին՝ Մուհամմադն իրեն հռչակում է մարգարե և իր հասկացած ձևով 610 թվականից սկսում քարոզչությամբ զբաղվել՝ ստեղծելով մի նոր կրոն»: ՀԿ-ները նաև նշում էին, որ 8-րդ դասարանի դասագրքում բացասական լույսի ներքո է ներկայացված կաթոլիկ միսիոներների աշխատանքը և դասագրքից մատնանշում էին այսպիսի ձևակերպումներ. «Կաթոլիկ քարոզչությունը հատկապես սարսափելի ավերածություններ գործեց Եվրոպայի հայկական գաղթավայրերում»: Քննադատական կարծիք հայտնող ՀԿ-ները նշում էին, որ 9-րդ դասարանի դասագրքում ավետարանական շարժումները ներկայացված էին որպես սպառնալիք ՀԱԵ-ի համար, իսկ մյուս կրոնական խմբերը մեղադրվում էին «հոգեորսության» մեջ, իսկ 11-րդ դասարանի դասագրքում ասված էր. «Հայերը հավատով քրիստոնյա են, դավանանքով՝ հայ առաքելական»:

Հունվարի 24-ին «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ Կրթության նախարարին հարց ուղղվեց դպրոցներում ՀԱԵ-ի քարոզչության և Հայոց եկեղեցու պատմություն առարկայով սահմանված պահանջի մասին, որով ավագ դպրոցի շրջանավարտները, այդ թվում եզդի և ոչ քրիստոնյա աշակերտները, պետք է մասնակցեն ՀԱԵ-ի կրոնական տոներին և հասկանան դրանց իմաստը: Ի պատասխան նախարարը մեջբերեց օրենքի հոդվածը, որով երկրի տարածքում քարոզչություն իրականացնելու բացառիկ իրավունք է վերապահվում ՀԱԵ-ին և որ փոքրամասնությունները կարող են քարոզչություն իրականացնել իրենց համայնքի ներսում: Նախարարը նաև ասաց. «Մենք ՀԱԵ-ի ներքո ապրող ժողովուրդ ենք»: Մեկ այլ տեսանյութում, որ հեռարձակվել է մայիսի 29-ին, նախարարն ասաց, որ եզդիական համայնքի ներկայացուցիչները, ում հետ հանդիպելու առիթ ինքն ունեցել է, մտահոգություն չեն հայտնել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի մասին, այլ առաջ են քաշել իրենց լեզվի պահպանության հարցը: Ապա՝ նախարարն հավելեց, որ պատրաստ է եզդիների ու քրդերի մասին տեղեկություններ ներառել այն դպրոցներում, որտեղ կան փոքրամասնություններ, «բայց ամբողջ Հայաստանում, բնականաբար՝ չենք կարող»:

Epress.am անկախ առցանց լրատվական հարթակը, որն արձարծում է մարդու իրավունքներին առնչվող հարցերը, նոյեմբերի 1-ին հրապարակեց մի հոդված, որտեղ պատմում էր, որ Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության դասախոսն ուսանողներին հայտնել է, որ քնություն ընդունելու է ՀԱԵ-ի եկեղեցական կառույցներից մեկում և աղջիկներին հրահանգել է

քննությանը ներկայանալ գլխաշորով: Մի ուսանող էլ հեռացվել էր նրա դասից, քանի որ հայտարարել էր, թե ինքն աթեիստ է:

2012թ. Կրթության նախարարության կողմից մեկնարկած պիլոտային ծրագրի հիման վրա դպրոցների տնօրինությունները 2-ից 4-րդ դասարաններում կարող են ներառել հավելյալ առարկա, որը կոչվում է Հայոց եկեղեցու պատմություն/քրիստոնեական դաստիարակություն: Երբ դպրոցն ընտրում է այդ տարբերակը, ապա այդ առարկան 2-4-րդ դասարանցիների համար դառնում է պարտադիր: Տարվա ընթացքում այս տարբերակով առաջնորդվել է 76 դպրոց:

Մարդու իրավունքների ակտիվիստները մտահոգ են կառավարության կողմից արվող հայտարարությունների և քաղաքականության, այդ թվում 2016թ. Սահմանադրական փոփոխությունների ունեցած ազդեցությամբ, որոնք ՀԱԵ-ն ավելի շատ են կապում պետության հետ և հնարավորություն են ստեղծում կրոնական փոքրամասնությունների մարզինալացման համար: Օրինակ՝ իշխող Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ և Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը նախկին պաշտոնյայի կողմից ՀԱԵ-ի մասին հնչեցված քննադատությանն ի պատասխան ասաց. «Միակ, ամենաճիշտ ներդրումը Հայաստանում եկեղեցի կառուցելն է... Բա ի՞նչ անեն ներդրողները: Բա կարող ա աղանդավորական կազմակերպություններն անե՞ն: Այո՛, եկեղեցին մեր սուրբ եկեղեցին է, ու պետք է դպրոցներում Հայ եկեղեցու պատմության ժամերն ավելացնեն, ավելին՝ բուռն էլ, ձեր շրջապատում էլ»: Իսկ բանակում զինվորներին աղոթել ստիպելու մասին լրագրողի հարցին ի պատասխան նա ասաց. «Չեն ստիպում: Լավ են անում, ճիշտ են անում, իրավունքների խախտում չի: Ոչ պոռնություն են քարոզում, ոչ էրոտիկա: Շատ ճիշտ ա, որ բանակում աղոթքով են սկսում, հըլը պիտի պառլամենտում էլ, ամեն տեղ էլ պետք է ունենանք մեր հոգևոր զարթոնքը»: Իր խոսքում Շարմազանովը նաև նշել է, որ «Ազգն ու եկեղեցին միասնական են, քանի որ հայ և քրիստոնյա բառերը հոմանիշներ են», իսկ ՀԱԵ-ի մասին նա ասաց. «Սա մեր պետական եկեղեցին է»: Դեկտեմբերի 8-ին զինված ուժերի հոգևոր առաջնորդության ծրագրի հիմնադրման 20-րդ տարեդարձի միջոցառման ժամանակ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն ասաց. «Եկեղեցին չի կարող անջատ լինել ոչ պետությունից, ոչ բանակից: Դա ամրագրված է մեր Սահմանադրության, օրենսդրության, և ամենակարևորը՝ յուրաքանչյուր հայի սրտի մեջ»:

Մի շարք փոքրամասնական կրոնական խմբեր հաղորդում էին, որ զինվորական ծառայության ընթացքում իրենց որոշ հետևորդներ նախընտրել են չհայտնել իրենց կրոնական պատկանելության մասին, չնայած զորակոչիկներին ծառայության սկզբում առաջարկում են նշել իրենց կրոնական պատկանելությունը: Փոքրամասնական կրոնական խմբերի հաղորդմամբ զինծառայության ընթացքում իրենց համայնքի անդամների նկատմամբ ոտնձգություններ չեն եղել պայմանավորված նրանց հավատքով. խմբերից մեկի հաղորդմամբ բանակում ավետարանական քրիստոնյաների նկատմամբ դրական վերաբերմունք կար, այդ թվում՝ ՀԱԵ-ի

սպասավորների կողմից: Ըստ կառավարության՝ ՀԱԵ-ից զատ որևէ այլ կրոնական խումբ գորամասեր այցելելու հայտեր չի ներկայացրել: Զինված ուժերի հոգևոր առաջնորդության ծրագիրը, որ պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ նախաձեռնությունն է, շարունակում է այդ ծրագրում միայն ներգրավել ՀԱԵ-ի հոգևորականներին:

Հոկտեմբերի 12-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վճռեց, որ Եհովայի վկաների հետևորդների դատապարտումը զինվորական վերահսկողության ներքո այլընտրանքային ծառայություն անցնելուց հրաժարվելու համար եղել է անարդարացի և կառավարությունը պետք է «բնույթով իրապես քաղաքացիական այլընտրանքային ծառայության ապահովի» այն անձանց համար, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը: Եհովայի վկաները 2011թ. դատապարտվել էին 2.5 տարվա ազատազրկման և ազատ էին արձակվել 2013թ.-ին: Կառավարությունն այդ տարի ավելի ուշ ներդրեց այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, որն չէր վերահսկվում զինվորականների կողմից:

Եհովայի վկաները հայտնում էին, որ կրոնական դավանանքից կամ համոզմունքներից ելնելով զինվորական ծառայություն չանցնող իրենց հետևորդներից 161-ը տարեվերջի դրությամբ ավարտել էին այլընտրանքային աշխատանքային ծառայությունը, մինչդեռ 2016թ. այս թիվը կազմում էր 17 հոգի: Դեկտեմբերի դրությամբ Եհովայի վկաների 105 հետևորդներ գտնվում էին այլընտրանքային աշխատանքային ծառայության մեջ: Եհովայի վկաները փաստում էին, որ այլընտրանքային ծառայության դիմումները քննության առնող ու համակարգող հանրապետական հանձնաժողովը շարունակել է լինել բարեհաճ ու պատրաստակամ, իսկ ծրագիրը ընթացել է նորմալ: Ըստ Եհովայի վկաների՝ այլընտրանքային ծառայության հաստատությունների տնօրեններն իրենց գոհունակությունն են հայտնել ծրագրի վերաբերյալ:

Հոկտեմբերի 11-ին Ազգային ժողովում տեղի ունեցող լսումների ժամանակ Հելսինկյան կոմիտե ԿԿ-ից Ավետիք Իշխանյանը հարց ուղղեց պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանին աթեիստ և ՀԱԵ-ի հետևորդ չհանդիսացող զինվորներին «բանակում աղոթել ստիպելու» մասին: Նախարարը պատասխանեց, որ չգիտի որևէ դեպք, երբ զինվորին ստիպել են աղոթել կամ մկրտվել: Նախարարն ասաց, որ ինքը կպատժի նրանց, ովքեր կխախտեն օրենքը, միաժամանակ նշելով՝ «Ես բացարձակ եմ համարում այն արժեքը, որը մեր Հայ առաքելական եկեղեցին ստեղծում է մեր արժեհամակարգում, առհասարակ»:

Եհովայի վկաները նշում էին, որ շարունակում են դժվարությունների բախվել պաշտամունքային վայրեր կառուցելու հարցում, քանզի ամբողջ երկրում այդ հարցին միջամտում են տեղական պաշտոնյաները: Ըստ Եհովայի վկաների՝ համայնքապետարանների ներկայացուցիչների կողմից բազմաթիվ առիթներով հստակ հնչեցվել է, որ իրենք թույլ չեն տա Եհովայի վկաներին պաշտամունքային վայր

կառուցել իրենց գյուղում կամ քաղաքում: Մասնավորապես, Եհովայի վկաները դժվարությունների էին առնչվում ճարտարապետա-նախագծային փաթեթների հաստատման և շինարարության ու տարածքի օգտագործման թույլտվություններ ստանալիս: Տարեվերջի դրությամբ Եհովայի վկաները ՄԻԵԴ-ում ընթացքի մեջ գտնվող երեք գործ ունեին, որով բողոքարկում էին Երևանի քաղաքապետարանի արգելքը՝ Եհովայի վկաների սեփականության իրավունքով պատկանող տարածքներում պաշտամունքային վայր կառուցելու վերաբերյալ:

Եհովայի վկաների ներկայացուցիչները փաստում էին, որ շարունակել են իրավական ուղիներ գտնել՝ պաշտպանելու իրենց իրավունքները և փորձել են երկխոսել կառավարության հետ: Նրանք հայտնում էին, որ թե՛ Երևանում, թե՛ մարզերում հանրային միջոցառումներում շարունակվել է պաշտպանության ապահովումը ոստիկանների կողմից և նկատելի եղել շարունակաբար բարելավվող վերաբերմունք պետական կառավարման մարմինների կողմից իրենց անդամների նկատմամբ:

Ըստ տարբեր կրոնական խմբերի ու ՀԿ-ների, որոնք հանդես են գալիս կրոնական հանդուրժողականության դիրքերից, կառավարության հռետորաբանությունը, որով ՀԱԵ-ի հետևորդ լինելը նույնացվում է ազգային ինքնության հետ, շարունակել է նպաստել ՀԱԵ-ից զատ մնացած կրոնական կազմակերպությունների հանդեպ խտրականությանը: Հունիսի 8-ին «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի կողմից վարվող կրոնական լրատվության Religions.am պորտալում հրապարակված հարցազրույցում Ռեմա հոգեգալստական (պենտեկոստալ) եկեղեցու հովիվ Կարեն Խաչատրյանը քննության էր առնում այն պատճառները, որոնցով պայմանավորված է ՀԱԵ-ից զատ մյուս կրոնական կազմակերպությունների մարզինալացումը և հանրային կյանքում և գործընթացներում նրանց բացակայությունը: Ըստ Խաչատրյանի՝ ավետարանական ընտանիքի եկեղեցիները հասարակական ուշադրությունից դուրս են մնում մի շարք գործոնների արդյունքում. դրանք են՝ ՀԱԵ-ի դերը, պետության կողմնակալ վերաբերմունքը և ոչ արհեստավարժ լրատվական դաշտը: Փոքրամասնական քրիստոնյա այլ խմբեր հայտնում էին, որ իրենք վայելում էին երկրպագելու ազատությունն այն պարագայում եթե դա անում են աննկատ և իրենց գործունեությունը սահմանափակվում է միայն իրենց տարածքներով ու համայնքներով: Նրանք ասում էին, որ այդ տարածքներից դուրս ընդլայնվելը կամ պրոսելիտիզմի միջոցով իրենց առկա հետևորդների թիվն ավելացնելու ջանքերը կարող էին հանգեցնել ոտնձգությունների և խտրականության կրթական հաստատությունում կամ աշխատավայրում: Այս պատճառով, ինչպես նշում էին այդ խմբերը, նրանք իրենց գործունեությունն իրականացնելիս փորձում են աչքի չընկնել ու իրականացնում են ինքնագրաբնություն:

Արտաքին գործերի նախարարը նոյեմբերի 22-ին Երևանում նախաձեռնել էր «Քրիստոնյաների և կրոնական այլ խմբերի դեմ ատելության հիման վրա հանցագործությունների կանխարգելում և դիմագրավում. հեռանկարներ ԵԱՀԿ-ից և

անդին» համաժողովը, որը կազմակերպվել էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից՝ ԵԱՀԿ տարածքում և այլուր քրիստոնյաների հալածման հարցն արծարծելու նպատակով: Նախարարը նշեց, որ Հայաստանը «քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին երկիրն է»:

ՄԱՍ III. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Եհովայի վկաների կողմից, ի տարբերություն նախորդ տարիների, չեն եղել հաղորդումներ իրենց հետևորդների հանդեպ ֆիզիկական ոտնձգությունների մասին. Սակայն հրապարակային քարոզչություն իրականացնելիս արձանագրվել է բառացի վիրավորանք հասցնելու 10 դեպք: Որոշ դեպքերում շուտ են տվել նրանց գրականության սայլակները՝ պատճառելով փոքր վնաս: Եհովայի վկաների հաղորդմամբ տարածքում հերթապահող ոստիկանների օպերատիվ արձագանքներից հետո անհայտ իրավախախտներն այլևս չեն միջամտել խմբի գործունեությանը:

«Փյու» հետազոտական կենտրոնի կողմից 2017թ. մայիսին հրապարակված զեկույցում հարցվածների 82 տոկոսն համաձայնել էր այն ձևակերպմանը, որ «երկրի ազգային ինքնությունն իրապես կրելու համար կարևոր է ՀԱԵ-ի մաս կազմելը», իսկ 84 տոկոսը կարծիք էր հայտնել, որ «իրենց մշակույթը մյուսների հանդեպ վերադաս է»: Հարցվածների գերակշիռ մասը նշել, որ ՀԱԵ-ի հետևորդ է:

Բազմաթիվ փոքրամասնական քրիստոնյա խմբեր ու ՀԿ-ներ նշում էին, որ վերջին մի քանի տարիներին շատ առցանց և տպագիր լրատվամիջոցներում, հիմնականում՝ մասնավոր, կրոնական խմբերի վերաբերյալ չեզոք կամ դրական լուսաբանումներ ներկայացնելու միտում է նկատվում: Սակայն քրիստոնյա փոքրամասնական խմբերից մեկի դիտարկմամբ հեռարձակող լրատվամիջոցների գերակշիռ մասը, այդ թվում՝ հանրային հեռուստաընկերությունը, խուսափում են լուսաբանել կրոնական փոքրամասնական խմբերին և նրանց գործունեությունը, իսկ որոշ լրատվամիջոցներ և բլոգներ շարունակում են կրոնական փոքրամասնություններին որակել որպես «աղանդ» և ազգային անվտանգության սպառնալիք: Ըստ լրատվական աղբյուրների նմանօրինակ նյութեր հեղինակած բազմաթիվ ինքնահռչակ «փորձագետներ» և հեղինակներ ռուսամետ են և նրանց բացասական հռետորաբանությունն առավել ինտենսիվ է դարձել Ռուսաստանում Եհովայի վկաների կազմակերպությունն ուժով փակելուց հետո: Այս «փորձագետները» նշում էին, որ Արևմուտքի կողմից ֆինանսավորվող «աղանդները» հետամուտ են քաղաքական նպատակների և ձգտում են ապակայունացնել երկիրը: Ըստ տեղական ՀԿ-ների այս անհատների հռետորաբանությունը հետևողականորեն զուգակցվում էր Արևմուտքի հանդեպ աստելություն հրահրմամբ և միտված էր համընդհանուր արժեքների և մարդու իրավունքների՝ այդ թվում կրոնի և խղճի ազատության արժեզրկմանը: Հիմնական «փորձագետներից» մեկն Ալեքսանդր Ամարյանն էր, ով Ռուսաստանի կառավարության կողմից ֆինանսավորվող և Հայաստանում Հավաքական

անվտանգության համաձայնագրի կազմակերպության ակադեմիայի հետ առնչություն ունեցող Հանրային դիվանագիտության ինստիտուտի փորձագետ է:

Տարվա ընթացքում Եհովայի վկաների մասին տեղ են գտել բացասական լուսաբանման դեպքեր: «Եհովայի վկաները շատացել են» վերտառությամբ հոդվածում «Ժողովուրդը» գրում էր, որ Եհովայի վկաները մեծ թիվ են կազմում Ադրբեջանին սահմանակից Տավուշի մարզում, ինչը, «Ադրբեջանի հետ պայքարը հաշվի առնելով, դառնում է ազգային անվտանգության սպառնալիք, քանի որ Եհովայի վկաները հրաժարվում են գենք վերցնել»: Օրաթերթը նշում էր, որ Ադրբեջանում և Ռուսաստանում Եհովայի վկաների գործունեությունն օրենքով արգելված է, մինչդեռ Հայաստանում նրանց թիվն ավելանում է:

Նոյեմբերի 16-ին ՀԱԵ-ի Արարատյան թեմի պաշտոնական կայքում վերահրատարակվեց նրանց պաշտոնական «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթի «Երբ պահանջում են հանդուրժել ամեն ինչ» հոդվածը, որտեղ հեղինակը կրոնական և սեռական փոքրամասնություններին համեմատում է վարակի հետ: «Բացարձակ ճշմարտությունը դառնում է հարաբերական, «աստվածային գիտելիքի» անվան տակ տարածվում են բուդդիստական, կրիշնայական, ադանդավորական մտքեր, և կրոնական ոլորտում բավական տգետ մեր հանրությունը հաճույքով կուլ է տալիս այդ գեղեցիկ փաթեթավորված ձևակերպումները: Եվրոպական չափանիշները մեզնից պահանջում են չնկատել, որ առաջարկների ճանապարհին ինքնասպանության փորձերի, մարդկային զոհաբերությունների, հոգևոր խաղաղությունը թողած գոռում-գոչյուններով քարոզների մասնակցելու, ազգադավ գաղափարներ դավանելու հոգեկործան ուղին է»:

ՀԱԵ-ի վերաբերյալ ևս եղել են բացասական լուսաբանումներ ընդդիմադիր և անկախ լրատվամիջոցներում՝ թե՛ առցանց, թե՛ տպագիր, ինչպես նաև սոցիալական հարթակներում:

Հոկտեմբերի 16-ին Epress.am-ը հրապարակեց հարցազրույց երկու կանանց հետ, ովքեր նշում էին, որ քաղցրավենիք արտադրող հայտնի մասնավոր ընկերություններից մեկում աշխատանքային հարցազրույցի ժամանակ իրենց կրոնական հայացքների մասին հարց են տվել՝ հետաքրքրվելով, թե երբ են վերջին անգամ եկեղեցի գնացել և արդյո՞ք այժեիստ են, կամ էլ որևէ «ադանդի» անդամ:

Հոկտեմբերի 27-ին՝ կրոնական ազատության միջազգային օրը Եվրասիա համագործակցության հիմնադրամ տեղական ՀԿ-ն անցկացրեց կրոնական հանդուրժողականության խթանմանն ու խտրականության վերացմանն ուղղված իր եռամյա ծրագրի եզրափակիչ միջոցում: Միջոցառման ընթացքում մրցանակներ հանձնվեցին կրոնի ու համոզմունքի ազատությանն առնչվող հարցերը լավագույնս լուսաբանած լրագրողներին: Մրցանակի համար Եվրասիա համագործակցության հիմնադրամը ստացել էր հետևյալ հայտերը. 32 գրավոր հոդված, 14 տեսանյութ և 12 ծաղրանկար: Ծրագրի իրականացման ընթացքում, աշխատելով գործընկեր ՀԿ-ի հետ,

Եվրասիա հիմնադրամը կազմակերպել է 100-ավոր լրագրողների ուսուցում կրոնական հանդուրժողականության հարցերի շուրջ: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ ծրագիրը դրական է անդրադարձել լրատվամիջոցներում կրոնական հարցերի լուսաբանման վրա:

Ակնալիճ ոչ մեծ համայնքում շարունակվում էին ըստ լրատվական հաղորդումների ամենամեծ եզդիական Քուբա Մեր Դիվան տաճարի շինարարական աշխատանքները: Եզդիական համայնքն այն համարում է երկրում բնակվող եզդիների «հոգևոր կենտրոնը»: Նոյեմբերին միջազգային համաժողովում արտգործնախարար Նալբանդյանն ասաց. «Պատմականորեն գտնվելով տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում՝ Հայաստանը ձևավորել է համակեցության և այլ մշակույթների ու կրոնների նկատմամբ հարգանքի խորն արմատներ ունեցող ավանդույթներ: Հայաստանում պահպանվել է հարուստ մշակութային ժառանգություն, որոնց շարքում են հելլենիստական դարաշրջանի տաճար, աշխարհում հնագույնը համարվող մի շարք եկեղեցիներ, միջնադարյան հրեական գերեզմանատուն, 18-րդ դարի մզկիթ, իսկ շուտով այստեղ կլինի նաև աշխարհում ամենամեծ եզդիական տաճարը»:

Մեպտեմբերի 8-ին տեղի ունեցած տարածաշրջանի հոգևոր առաջնորդների եռակողմ հանդիպման ժամանակ Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքը, Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Չադեն և Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով խաղաղություն պահպանել տարածաշրջանում:

ՄԱՍ IV. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեսպանը և դեսպանության մյուս ներկայացուցիչները շարունակել են պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում խթանել կրոնական հանդուրժողականությունն ու միջդավանական երկխոսությունը: Դեսպանության պաշտոնյաները հանդիպում են ունեցել Պաշտպանության նախարարության ներկայացուցչի հետ՝ քննարկելու կրոնական հանդուրժողականությունը բանակում և զինված ուժերի կազմում գտնվող փոքրամասնական խմբերի հետևորդների նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Դեսպանը հանդիպել է կառավարության, կուսակցությունների, սոցիալական խմբերի և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ քննության առնելու կրոնական փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող խտրականության հարցերը, նպաստելու կառավարության ու կրոնական փոքրամասնությունների միջև երկխոսությանը և համատեղ դիտարկելու հիմնահարցերի լուծումները: Դեսպանը Մարդու իրավունքների պաշտպանի և կառավարության այլ պաշտոնյաների մոտ առաջ է քաշել կրոնական ազատության մասին առաջարկվող օրենսդրության վերաբերյալ կրոնական համայնքի մտահոգությունները: Հոկտեմբերին դեսպանը

ելույթով հանդես եկավ Հայաստանի հանրապետական կուսակցության և ընդդիմադիր «Լուսավոր Հայաստան» դաշինքի քաղաքական դպրոցներում, որտեղ մարդու իրավունքների հետ կապված հարցերի շարքում առանձնացրեց նաև կրոնական դավանանքի և համոզմունքի հիմքով խտրականության թույլ չտալու կարևորությունը:

Դեսպանն անկեղծ ու արդյունավետ հանդիպումներ է ունեցել է ՀԱԵ-ի առաջնորդների հետ՝ նրանց մասնակից դարձնելու կրոնական փոքրամասնությունների կողմից իրենց հավատքին առանց սահմանափակումների դավանելու իրավունքի իրացմանն աջակցելու գործին: Դեսպանության պաշտոնյաները մասնակցել են կրոնական հանդուրժողականության հարցերով համաժողովների, այցելել են ասորական գյուղում գտնվող կաթոլիկ առաքելական եկեղեցին, մասնակցել են Դվին համայնքում հրեական համայնքի կրոնական տոնակատարությանը և Բահայի հավատքի հիմնադիր Բահաուլայի ծննդյան երկհարյուրամյակի արարողությանը. նաև պարբերաբար հանդիպել են կրոնական և ազգային-կրոնական փոքրամասնությունների լայն շրջանակի ներկայացուցիչների հետ, այդ թվում ավետարանական քրիստոնյաների և այլ բողոքականների, Եհովայի վկաների, մորմոնների, եզդիների, առաքելական ասորիների և բահայականների հետ: Այս հանդիպումներում դեսպանատան պաշտոնյաները և կրոնական խմբերի ներկայացուցիչները քննարկել են կրոնի ազատության մասով երկրում տիրող իրավիճակը, այդ թվում փոքրամասնական կրոնական խմբերին մտահոգող հարցերը: Դեսպանատան պաշտոնյաները նաև մասնակցել են արտաքին գործերի նախարարության հյուրընկալած ԵԱՀԿ համաժողովին, որն առնչվում էր քրիստոնյաների նկատմամբ խտրականության հարցերին: Նրանք նաև հանդիպել են քաղաքացիական հասարակության խմբերի հետ՝ քննարկելու նրանց մտահոգությունները կապված հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասավանդման հետ:

Դեսպանության պաշտոնյաները ընդգրկված էին Եվրասիա համագործակցության հիմնադրամի ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության ժյուրիի կազմում և մասնակցել են լրատվամիջոցներում կրոնական հանդուրժողականությունը խթանող այդ մրցանակի հանձնման արարողությանը: Դեսպանությունն օգտագործել է սոցիալական հարթակները, այդ թվում՝ թվիթերյան և ֆեյսբուքյան հարթակները՝ հղելու ուղերձներ ի նպաստ կրոնական բազմազանության և հանդուրժողականության: